



ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Նեյտրոնների բազմացման մեծ գործակցով անկառավարելի շղթայական ռեակցիա է իրականացվում սպրինգերում: Որպեսզի փեղի ունենա էներգիայի գրեթե ակնթարթային անջատում պայթյուն, ռեակցիան իրականացվում է արագ նեյտրոններով առանց դանդաղարարի օգտագործման: Որպես պայթուցիկ նյութ օգտագործվում է ուրան-235 կամ պլուտոնիում: Պայթյուն իրականացնելու համար վերցնում են միջուկային նյութի երկու մինչկրիտիկական զանգվածի կտորներ: Ռոմբում դրանք փեղակայվում են միմյանցից որոշակի հեռավորության վրա կամ բաժանվում են հատուկ միջնորմով: Երկու կտորների միացումով սպահովվում է կրիտիկական կամ գերկրիտիկական զանգվածը, ինչն էլ ուղեկցվում է պայթյունով: Կտորների միմյանց միացումն ու միմյանց սեղմումը կատարվում է սովորական պայթուցիկ նյութի միջոցով:

Ռոմբի պայթյունի ժամանակ շրջակա մերձավոր միջավայրի ջերմաստիճանը հասնում է մի քանի միլիոն աստիճանի, ինչ բարձրացնում է օդի ճնշումը: Առաջանում է հզոր հարվածային ալիք: Միաժամանակ առաջանում է հզոր էլեկտրամագնիսական ճառագայթում: Բացի այդ, շղթայական ռեակցիայի արգասիքները խիստ ռադիոակտիվ են և շրջակա փարածքի բոլոր կենդանի օրգանիզմները ոչնչացնում են: Մարդկությունն առաջին անգամ սպրինգերում ռոմբի կատարած ավերածությունների և կենդանի օրգանիզմների վրա նրա ունեցած ճառագայթային ազդեցության մասին իրական պարկերացում ունեցավ, երբ 1945 թվականին ԱՄՆ-ը սպրինգերում ռոմբեր ներկեց Ճապոնիայի Հերոսիմա և Նագասակի քաղաքների վրա, ոչնչացնելով հարյուր հազարավոր մարդկանց: Ժամանակակից ռոմբերի համեմատությամբ առաջին ռոմբերն արդեն երեխայական խաղալիք են թվում: Սա ցավալի իրողություն է, սակայն առայսօր մարդկությունը չի կարողացել պեյթյունների խաղաղ գոյակցության խնդիրը վերջնականապես լուծել և միջուկային պատերազմների վրանգը դամոկլյան սրի պես կախված է մարդկության գլխին: